ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Հայ-ռուսական համալսարանի
գիտական գծով պրոռեկտոր,
փ.գ.դ., պրոֆեսոր
Պ.Ս. Ավետիսյան

«22» հունիսի 2020թ.

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ

Առնոլդ Սամվելի Վարդանյանի՝ «Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման տեսական և գործնական հիմնահարցերը ՀՀ քրեական դատավարությունում» վերտառությամբ ԺԲ.00.04 - Դատական իրավունք (դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Ա.Վարդանյանի կողմից իրականացված հետազոտության թեման արդիական է և կարևոր: Մարդու իրավունքների գերակայության հաստատման և դրանց պաշտպանության աստիճանի բարձրացման գործընթացում ինչ խոսք իր ուրույն դերակատարությունն ունի պետության կողմից համապատասխան իրավական գործիքակազմերի սահմանումն ու գործնականում դրանց պատշաճ կիրառությունը: Քրեադատավարական ընթացակարգերում կանխարգելիչ բնույթի անվտանգության միջոցների և հատուկ վարույթների նախատեսումը, դրանց պատշաճ կիրառությունն իրենց հերթին երաշխիք են քրեական դատավարության համապատասխան սուբյեկտների իրավունքների լիարժեք իրացման համար:

Կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների (այսուհետ՝ ԲԲՀՄ) գործարկման ընթացքում տարբեր հարթություններում ի հայտ են գալիս տարաբնույթ խնդիրներ, մասնավորապես, տեսական հարթությունում առկա չէ միասնական մոտեցում ԲԲՀՄ-ի նպատակների, քրեադատավարական այլ ինստիտուտների հետ հարաբերակցության շրջանակներում: Տարբեր են նաև մոտեցումները սույն ինստիտուտի գործնական կիրառության ընթացքում ծագող

իրավահարաբերությունների մասով: Այս ամենով է պայմանավորված ներկայացված ատենախոսության թեմայի արդիականությունը:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ԲԲՀՄ-ի էության, բնույթի, նպատակների, կառուցակարգի և ընթացակարգի հետազոտումը, տեսական մոտեցումների, միջազգային փորձի և միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների կողմից մշակված չափորոշիչների վերլուծությունը, քննարկվող ինստիտուտի վերաիմաստավորման և կատարելագործման ուղիների մշակման և ներդրման տեսանկյունից ունի էական նշանակություն: Այն արդական է նաև ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում (այսուհետ՝ Նախագիծ) քրեադատավարական սույն ինստիտուտը բովանդակային փոփոխություններով և օրենսդրական նոր կարգավորումներով ներկայացնելու հնարավորության տեսանկյունով:

Պետք է փաստել, որ իրականացված հետազոտությունն ընդգրկել է բավական ծավալուն առարկա՝ ԲԲՀՄ-ի նշանակման հարաբերությունները կարգավորող միջազգային և ներպետական իրավական նորմերը, ՔԴՕ նախագծի կարգավորումները, իրավակիրառ պրակտիկան, միջազգային փորձն ու դոկտրինալ աղբյուրները:

Հեղինակի կողմից հետազոտության առարկան կազմող վերը նկարագրված հիմնահարցերի ուսումնասիրման միջոցով՝ ԲԲՀՄ քրեադատավարական սույն ինստիտուտի էության բացահայտումը թույլ է տալիս պարզել այդ ինստիտուտի առանձնահատկությունները, ինչպես նաև նրա տեղը և դերը հարակից դատավարական կարգավորումների համատեքստում:

Ատենախոսության ուսումնասիրությունը հիմք է տալիս պնդելու, որ Ա.Վարդանյանը հիմնականում իրագործել է իր առջև դրված ուսումնասիրության նպատակները:

Նշված նպատակին հասնելու համար հեղինակի կողմից խնդիր է դրվել.

- նախանշել ԲԲՀՄ-ի կիրառման վարույթի՝ ռոմանոգերմանական և անգլոսաքսոնական իրավական համակարգերի հայեցակարգային առանձնահատկությունները,

- հստակեցնել ԲԲՀՄ-ի կիրառման հատուկ վարույթի իրավական բնույթը, դատավարական նշանակությունը, հարաբերակցությունն ընդհանուր հիմունքներով անցկացվող վարույթի հետ,

- բացահայտել փորձաքննության ենթարկելու համար անձին բժշկական հաստատությունում տեղավորելու, ինչպես նաև անմեղսունակության վիճակում քրեական օրենքով արգելված արարք կատարած և դեպքից հետո հոգեկան հիվանդությամբ հիվանդացած անձանց նկատմամբ ԲԲՀՄ-ի կիրառման վարույթ հարուցելու, անվտանգության միջոցներ կիրառելու

..րմքերի և պայմանների շրջանակը,

- որոշակիացնել հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձի դատավարական կարգավիճակը, նրա իրավունքների և իրավաչափ շահերի պաշտպանության երաշխիքների շրջանակը,

- վեր հանել ԲԲՀՄ-ի կիրառման մինչդատական և դատական վարույթների ընթացքում ծագող տեսական և գործնական հիմնախնդիրները՝ ուսումնասիրելով դրանց առնչությամբ ձևավորված դատական պրակտիկան և միջազգային փորձը,

- համեմատաիրավական վերլուծության ենթարկել ԲԲՀՄ-ի կիրառման վարույթի վերաբերյալ գործող ՔԴՕ-ի և նոր ՔԴՕ նախագծի կարգավորումները,

- կատարված հետազոտության արդյունքների հիման վրա մշակել համապատասխան հիմնախնդիրների լուծմանն ուղղված առաջարկություններ:

Ուսումնասիրության տեսական հիմք են կազմել քրեադատավարական ոլորտի առաջադեմ գիտնականների գիտական աշխատությունները: Հեղինակն ուսումնասիրելով վեր հանված հիմնախնդիրները՝ վիճահարույց հարցերի շուրջ իր գիտական միտքը համադրել է այլ գիտնականների տեսակետների հետ:

Ատենախոսի տեսական դատողությունների և եզրահանգումների հիմնավորվածությունն ապահովվել է կատարված հետազոտության մեթոդաբանական բազայով, գրականության մեծաքանակ աղբյուրների օգտագործմամբ, հարուստ իրավական և փորձառական հիմքով: Հատկապես, ցանկանում ենք առանձնացնել հեղինակի կողմից Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի, ՀՀ սահմանադրական դատարանի, ՀՀ վճռաբեկ դատարանի դատական ակտերի ուսումնասիրումը և դրանց դրույթների ստեղծագործական օգտագործումը ատենախոսությունում արտահայտած մտքերի ու արված հետևությունների հիմնավորման ժամանակ:

Հետազոտության գիտական նորույթն այն է, որ ատենախոսությունը հայրենական իրավագիտության առաջին համապարփակ և ամբողջական գիտահետազոտական ուսումնասիրությունն է, որտեղ փորձ է արվել հնարավորինս համալիր և բազմակողմանի քննարկել ու վերլուծել ԲԲՀՄ-ի կիրառման վարույթի տեսական և գործնական հիմնահարցերը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 3 գլուխներից, դրանցում ընդգրկված 11 պարագրաֆներից, եզրակացությունից, օգտագործված գրականության, իրավական ակտերի և պրակտիկ նյութերի ցանկից:

Ատենախոսության սեղմագիրը և հրատարակված 9 հոդվածներն արտացոլում են ատենախոսության հիմնական դրույթները և չեն հակասում դրան:

Այս ամենով հանդերձ, ներկայացված թեկնածուական թեզում առկա են որոշ վիճարկելի դրույթներ, որոնք, ընդհանուր առմամբ, չազդելով աշխատանքի դրական գնահատականի վրա, լրացուցիչ հիմնավորման կարիք ունեն: Մասնավորապես.

1. Հեղինակի կողմից ատենախոսության առանձին պարագրաֆներում հիմնավորումներ են տրվում գործող մի շարք իրավական ակտերում նոր կարգավորումներ նախատեսելու վերաբերյալ, սակայն, ըստ էության բացակայում են ներկայացված գաղափարներն իրագործելու նպատակով նշված իրավական ակտերում փոփոխությունների և լրացումների տեսքով առաջարկվող կոնկրետ հեղինակային իրավական կարգավորումները (օրինակ՝ հիշատակվող օրենքի որևէ հոդվածում լրացում կամ փոփոխություն կատարելու վերաբերյալ հստակ ձևակերպված տեքստ), ինչը մեր կածիքով առավել քան մատչելի և առարկայական կդարձներ արված եզրահանգումներն ու առաջարկները (*ատենախոսության 118-րդ էջի «հղումներ» հատվածում միայն ներկայացված է արդեն իսկ շրջանառության մեջ դրված «22 քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 22 օրենքի նախագծի տեքստը*):

2. Պաշտպանության ներկայացված դրույթների 1-ին կետով հեղինակի կողմից առաջարկվում է ունիֆիկացնել անմեղսունակ անձանց և դեպքից հետո հոգեկան հիվանդությամբ հիվանդացած անձանց նկատմամբ ԲՔՀՄ-ի կիրառման երկու հատուկ վարույթները, պատճառաբանելով, որ դրանք չունեն այն աստիճան էական և կայուն առանձնահատկություններ, որոնք կարող էին հիմք հանդիսանալ դրանք միմյանցից առանձին վարույթների մակարդակով կարգավորելու համար: Նկատի ունենալով, որ ըստ էության, գործ ունենենք սկզբունքորեն տարբեր իրավիճակների հետ, իրավական հետևանքների ծավալի առումով առկա է որոշակի առանձնահատկություն, գտնում ենք, որ դրանց ուղղակի նույնացման վերաբերյալ առաջարկն համոզիչ չէ և պաշտպանության ընթացքում լրացուցիչ հիմնավորման կարիք ունի: Առավել ևս, պետք նկատի ունենանք, որ երկու վարույթների ունիֆիկացմամբ, ըստ էության, ինչ-որ քրեադատավարական նշանակության էական խնդիր չի լուծվելու:

3. Պաշտպանության ներկայացված 3-րդ առաջարկը վերաբերում է փորձաքննության ենթարկելու համար անձին բժշկական հաստատությունում տեղավորելու և նույն ժամանակահատվածում կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու ձևով անձի ֆիզիկական ազատությունը սահմանափակող դատավարական հարկադրանքի միջոցների կրկնակի կիրառման անթույլատրելիությանը:

Հիշատակված քրեադատավարական հարկադրանքի միջոցներն ըստ էության տարբեր նպատակներ և խնդիրներ են հետապնդում, ինչպես նաև կիրառման համար տարբեր

իրավական հիմքեր են նախատեսում: Ըստ այդմ, դրանց մեկը մյուսով պարզապես փոխարինումը կամ նույնացումը, մեր կարծիքով ճիշտ չէ: Օրինակ, ինչպես ենք պատկերացնում առանձնապես ծանր հանցագործության կատարման մեջ մեղադրվող անձի դեպքում փորձաքննության ենթարկելու համար բժշկական հաստատությունում տեղավորելու և նույն ժամանակահատվածում կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու կամ չկիրառելու գործընթացը:

Բացի այդ, ցանկալի կլիներ ներկայացված դրույթի հիմնավորումը տեսնել նաև արձանագրված վիճակագրական տվյալների պրիզմայի ներքո:

4. Պաշտպանության ներկայացվող 4-րդ դրույթում արտացոլված հեղինակի առաջարկը, ըստ որի՝ անձի հոգեկան հիվանդությամբ տառապելու վերաբերյալ հիմնավոր կասկածների ծագման պահից մասնավոր կարգով իրականացվող քրեական հետապնդումը պետք է վերաճի հանրային քրեական հետապնդման, ենթակա է հղկման, քանի որ պրակտիկորեն շատ դժվար կամ անհնար է հստակ որոշել հիմնավոր կասկածների ծագման պահը. որպես այդպիսին համարել քննիչի մոտ այդ կասկածների առաջացմա՞ն պահը, թե՞ համապատասխան փորձաքննություն նշանակելու մասին որոշումը կայացնելու պահը: Արդյունավետ իրավակիրառման տեսանկյունից առավել նպատակահարմար է մասնավոր քրեական հետապնդումը հանրային քրեական հետապնդման վերաճման ձևական հիմք դիտել փորձաքննություն նշանակելու մասին որոշումը: Բացի այդ՝ հեղինակի այդ առաջարկը չի ներառում մասնավոր քրեական հետապնդումը հանրային քրեական հետապնդման վերաճման կոնկրետ իրավական-ընթացակարգային լուծումներ, մասնավորապես՝ այդ կասկածների առաջացումն ինքնին բավարար է արդյո՞ք մասնավոր քրեական հետապնդումը հանրային քրեական հետապնդման վերաճման համար, թե՝ դրա համար պետք է առանձին դատավարական որոշում (օր.՝ հսկող դատախազի) և այլն:

Ինչպես երևում է նշված նկատառումների բովանդակությունից, դրանք հիմնականում կրում են մասնավոր բնույթ և չեն արժեզրկում ընդհանուր առմամբ հաջողված ատենախոսությունը ու պայմանավորված են հեղինակի հետագա աշխատանքներն առավել կատարյալ տեսնելու ցանկությամբ:

Հետևություն. *Առնոլդ Սամվելի Վարդանյանի ատենախոսությունը համապատասխանում է ԲՈԿ-ի կողմից ներկայացվող պահանջներին, իրենից ներկայացնում է բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման տեսական և գործնական հիմնախնդիրներին վերաբերող համակարգված, համալիր և ավարտուն հետազոտություն, իսկ դրա հեղինակն արժանի է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման՝*

ՏԲ.00.04 - «Դատական իրավունք (դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն)» մասնագիտությամբ:

Հայ-ռուսական համալսարանի իրավունքի
և քաղաքականության ինստիտուտի քրեական
իրավունքի և քրեական դատավարության
իրավունքի ամբիոնի վարիչ,
ի.գ.թ., դոցենտ՝ Ն.Յու.Զոհրաբյան

Հաստատում եմ՝
ՀՌՀ գիտքարտուղար,
բ.գ.թ. Ռ.Ս. Կասաբաբովա